# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՊԱՇԳԱՄԲՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «20»-Ը ՄԱՅԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ N «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-26/46» ԾԱԾԿԱԳՐՈՎ

## ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Արթիկ «07»-ը հուլիս 2026թ

**«ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանը»**, ի դեմս համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանի, որը գործում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինտեխտրանս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Պողոսյան-ի, որը գործում է ՍՊ ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ <<Կողմեր>>, ցուցաբերելով երկկողմանի կամահայտնություն, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 469-րդ հոդվածի 1-ին կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով կնքեցին սույն համաձայնագիրը կնքեցին «20»-ը մայիսի 2026թ-ին կնքված ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքի կարիքների համար՝ Արթիկ քաղաքի Ազատության հրապարակի բազմաբնակարան շենքերի պաշգամբների վերանորոգման շինարարական աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ N «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-26/46» ծածկագրով գնման պայմանագրում հետևյալ փոփոխությունները կատարելու վերաբերյալ.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հիմք ընդունելով ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի և «Շինտեխտրանս» ՍՊԸ-ի, միջև «20»-ը մայիսի 2026թ-ին կնքված ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ Արթիկ քաղաքի Ազատության հրապարակի բազմաբնակարան շենքերի պաշգամբների վերանորոգման շինարարական աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների N «ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-26/46» ծածկագրով պայմանագրի 7.5 և 7.15 կետերը Կողմերը որոշեցին.

**1.1** Պայմանագրի հավելված N2 վճարման ժամանակացույցի աղյուսակը փոխարինել հետևյալ աղյուսակով. (հավելված N3)

**1.2** Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**2.1** Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

**2.2** Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**2.3** Պայմանագրով ամրագրված և սույն համաձայնագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

**2.4** Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարան Ազատության փ1
ՀՀ ֆին. Նախ. Գործառն. Վարչություն
h/h 9002022175049
ՀՎՀՀ 05553661
Համայնքի ղեկավար
Ա. Ոսկանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Շինտեխտրանս» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ,Լոռու մարզ, ք. Գուգարք, 4փող, 1փկղ, ն1
ՀՎՀՀ 06963714
Բանկ՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
h/h 2050222200521001
Տնօրեն Ա. Պողոսյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«20»-ը մայիսի 2026թ. կնքված
«ՇՄԱՀ-ԳՀԽԾՁԲ-26/46» ծածկագրով
պայմանագրի համաձայնագիր N1

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, ***փաստացի մատուցված ծառայությունների*** դիմաց այդ թվում… | | | | | | | | | | | | | |
| | | | *հունվար* | *փետրվար* | *մարտ* | *ապրիլ* | *մայիս* | *հունիս* | *հուլիս* | *օգոստոս* | *սեպտեմբեր* | *հոկտեմբեր* | *նոյեմբեր* | *դեկտեմբեր* | ***Ընդամենը*** |
| 1 | **71351540** | ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ Արթիկ քաղաքի Ազատության հրապարակի բազմաբնակարան շենքերի թվով 56 պատշգամբների վերանորոգման շինարարական աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ: | | | | | | | *90 000* | *90 000* | *90 000* | *90 000* | *90 000* | *90 000* | ***90 000*** |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի
համայնքապետարան
Ազատության փ1
ՀՀ ֆին. Նախ. Գործառն.
Վարչություն
h/h 9002022175049
ՀՎՀՀ 05553661
Համայնքի ղեկավար՝
Ա. Ոսկանյան

-----------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Շինտեխտրանս» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ,Լոռու մարզ, գ. Գուգարք, 4փող, 1փկղ
տ1
ՀՎՀՀ 06963714
Բանկ՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
h/h 2050222200521301
Տնօրեն՝ Ա. Պողոսյան

-----------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.